Հիմք ընդունելով Գագիկ Վանոյի Ղազարյանի (նույնականացման քարտ՝ 002124709, տրված՝ 22.06.2015-ին) դիմումը (մուտք՝ 20/02/2024-ի ՔԴ-220-24), անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման թիվ 2204901 տրված 9.01.2007թ-ին, «Արտյոմ Սաքանյան» ԱՁ-ի կողմից կազմված հատակագիծը, կադաստրի կոմիտեում հաշվառված թիվ 2023JCFPGN ծածկագիրը, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, ՀՀ Կառավարության 29 ապրիլի 2021 թվականի N 698-Ն որոշումով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշումով հաստատված կարգի, 17-րդ և 18-րդ կետի բ) ենթակետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի հունվարի 5-ի 14-Ն որոշումով, նկատի ունենալով որ 2012թ-ին կառուցված ինքնակամ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, որակավորված անձի կողմից փաստացի չափագրման արդյունքում ճշտվել են հողամասի սահմանային չափերը և մակերեսը, որը կազմում է՝ 0,02652 հա

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Ճանաչել օրինական ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, ք. Տաշիր, Պուշկինի փողոց, թիվ 131 ա հասցեում (կադաստրային ծածկագիր՝ 06-008-0117-0003, ) սեփականության իրավունքով պատկանող Գագիկ Վանոյի Ղազարյանի կողմից բնակավայրերի հասարակական կառուցապատման 0,02562 հա հողամասում ինքնակամ կառուցված՝ 111,72 քմ մակերեսով շինությունը համաձայն «Արտյոմ Սաքանյան» ԱՁ-ի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված

հատակագծի:
1) ավտոտեխսպասարկման կետ 37,55 քմ,
2) պարիսպ՝ 2,87 քմ,
3) ծածկ՝ 71,3 քմ,
2. Հողամասի սահմանները որոշվում են համաձայն «Արտյոմ Սաքանյան» ԱՁ-ի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված տեղագրական հատակագծի:
3. Պարտավորեցնել ինքնակամ կառույցն իրականացնող Գագիկ Վանոյի Ղազարյանին, սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում Տաշիր համայնքի բյուջե վճարել ( հաշվեհամար՝ 900275081124) ինքնակամ կառույցների օրինականացման համար սահմանված վճարը՝ ընդհանուր շինությունների համար 229700 (երկու հարյուր քսան ինը հազար յոթ հարյուր) ՀՀ դրամ:
4. 60-օրյա ժամկետում սահմանված գումարի չվճարման դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:
5. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ Ն. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

2024թ. մարտի 14

ք.Տաշիր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 մարտի 2024 թվականի N 259-Ա

## ՀԱՅՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔ ՔԱՂԱՔ ՏԱՇԻՐ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՓՈՂՈՑ 31 ՀԱՍՑԵՈՒՄ ՔԱՂԱՔԱՑՈՒՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 07-Ի ԹԻՎ 891-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հովհաննես Գասպարյան Մելիքսեթի (անձնագիր՝ AR0529175, տրված՝ 05.12.2017-ին) դիմումը (մուտք՝ 25/08/2023-ի ՔԴ-984-23), անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման թիվ 2597710 տրված 23.10.2008թ-ին, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի 2023 թվականի հունիսի 29-ի գործ թիվ ԼԴ3/0042/02/23 քաղաքացիական գործով վճիռը, «Արտյոմ Սաքանյան» ԱՁ-ի կողմից կազմված հատակագիծը, կադաստրի կոմիտեում հաշվառված թիվ 2023NSKJNS ծածկագիրը, ղեկավարվելով ՀՀ Կառավարության 29 ապրիլի 2021 թվականի N 698-Ն որոշումով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառվարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշումով հաստատված կարգի, 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ և 13-րդ կետի բ) ենթակետով, և 18-րդ կետի դ) ենթակետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի հունվարի 5-ի 14-Ն որոշումով, նկատի ունենալով որ 2020թ-ին կառուցված ինքնակամ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հաշվի առնելով որ փաստացի չափագրման արդյունքում որակավորված անձի կողմից կազմված հատակագծում հողամասի մակերեսը կազմում է՝ 0,10098 հա

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Ճանաչել օրինական ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, ք. Տաշիր, Թումանյան փողոց թիվ 31 հասցեում (կադաստրային ծածկագիր՝ 06-008-0109-0024 ) սեփականության իրավունքով պատկանող Հովհաննես Գասպարյան Մելիքսեթի կողմից բնակավայրերի բնակելի կառուցապատման 0,10098 հա հողամասում ինքնակամ կառուցված՝ 81,8 քմ ընդհանուր մակերեսով շինությունները համաձայն «Արտյոմ Սաքանյան» ԱՁ-ի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի:

2. Ճշտել հողամասի սահմանային չափերը համաձայն կադաստրային քարտեզի և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի:

1) ամառային խոհանոց՝ 65,8 քմ ընդհանուր մակերեսով,

2)պարիսպ՝ 16 քմ ընդհանուր մակերեսով,

3) թվով 5 միջնորում,

4) թվով 5 դուռ,

5) թվով 5 պատուհան,

2. Պարտավորեցնել ինքնակամ կառույցն իրականացնող Հովհաննես Գասպարյան Մելիքսեթին սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում Տաշիր համայնքի բյուջե վճարել ( հաշվեհամար՝ 900275081124) ինքնակամ կառույցների օրինականացման համար սահմանված վճարը՝ ընդհանուր շինությունների համար 84100 ( ութսունչորս հազար հարյուր) ՀՀ դրամ և թվով 15 փոփոխությունների համար 1 միավորը՝ 1028 (մեկ հազար քսանութ) ՀՀ դրամ, ընդհանուրի համար 15420 ( տասնհինգ հազար չորս հարյուր քսան) ՀՀ դրամ:

3. 60-օրյա ժամկետում սահմանված գումարի չվճարման դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

4. Ուժը կորցրած ճանաչել համայնքի ղեկավարի 2023 թվականի սեպտեմբերի 07-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզ Տաշիր համայնք քաղաք Տաշիր Թումանյան փողոց թիվ 31 հասցեում քաղաքացուն սեփականության իրավունքով պատկանող հողամասում ինքնակամ կառուցված շինությունների օրինականացման մասին » թիվ 891-Ա որոշումը:

5. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ Ն. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

2024թ. մարտի 14

ք.Տաշիր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 մարտի 2024 թվականի N 260-Ա

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԷԼԵԿՏՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N596-Ն որոշումով, ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու 2024 թվականի հունվարի 12-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքում 2024 թվականի համար տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը սահմանելու մասին» N 02-Ն որոշման հավելված 1-ի 1-ին կետով, «Վոլիոս նախագծային ինստիտուտ» ՓԲԸ-ի տնօրեն Արամ Շահինյանի դիմումը (մուտք՝ 28/02/2024-ի ՊՄ-473-24)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. «Հայատանի էլեկտրական Ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությանը տալ 0.4կվ օդային գծերով էլեկտրամատակարարման շինարարության թույլտվություն:
2.«Հայատանի էլեկտրական Ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությանը՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանի 900275081207 հաշվեհամարին մուծել 15000 (տասնհինգ հազար) դրամ տեղական տուրք՝ շինարարության թույլտվության համար:
3.«Հայատանի էլեկտրական Ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությունը պարտավոր է շինարարական աշխատանքները սկսելուց առնվազն 3 օր առաջ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի ղեկավարին ներկայացնել 2-5 ձևի տեղեկանք:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ — Ն. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

2024թ. մարտի 14

ք. Տաշիր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashirlori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 մարտի 2024 թվականի N 261-Ա

## ԱՐԱԻԿ ԴՈՒՄԻԿՅԱՆԻՆ,ԶՎԱՐԹ ԴՈՒՄԻԿՅԱՆԻՆ, ԱՇՈՏ ԴՈՒՄԻԿՅԱՆԻՆ ԵՎ ՍԵՐԳԵՅ ԴՈՒՄԻԿՅԱՆԻՆ ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԵՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ՊԱՀԱՆՋ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**1.ՀՀ Տաշիր համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան.**

Արաիկ Դումիկյանը,Զվարթ Դումիկյանը, Աշոտ Դումիկյանը և Սերգեյ Դումիկյանը, հանդիսանալով հողի հարկ և անշարժ գույքի հարկ վճարող սուբյեկտ, իրավահարաբերության ծագման պահին գործող « Հողի հարկի մասին» ՀՀ օրենքով և ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված կարգով չեն կատարել հողի հարկ և անշարժ գույքի հարկ վճարելու պարտականությունը, ինչի կապակցությամբ 2024 թվականի փետրվարի 28-ին « Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի հիմքով Տաշիրի համայնքապետարանի աշխատակազմում հարուցվել է վարչական վարույթ՝ հողի հարկի և գույքահարկի գանձման հարցի քննության նպատակով: «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ օբյեկտիվ քննության արդյունքում բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

**2. Վարչական ակտն ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.**

Համաձայն Տաշիրի համայնքապետարանի ֆինանսատնտեսագիտական,եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի և ՀՀ Կադաստրի կոմիտեի կողմից տրամադրված տվյալների՝ 06-074-0223-0082,06-074-0282-0097,06-074-0214-0008 և 06-074-0254-0111 կադասրային ծածկագրերով, 2.2 հա ընդհանուր մակերեսով հողամասերը հանդիսանում են Արաիկ Դումիկյանի, Զվարթ Դումիկյանի, Աշոտ Դումիկյանի և Սերգեյ Դումիկյանի սեփականությունը, որոնք իրավահարաբերության ծագման պահին գործող «Հողի Հարկի մասին» ՀՀ օրենքով և ՀՀ հարկային օրենսգրքով համարվում են հարկվող օբյեկտ :

Նշված հողատեսքերի հողի հարկը 2008-2020 թվականների համար կազմում է 210.765 ( երկու հարյու տասը հազար յոթ հարյուր վաթսունհինգ) ՀՀ դրամ,որից 141.401 ( հարյուր քառասունմեկ հազար չորս հարյուր մեկ) ՀՀ դրամ՝ որպես ապառք, 69.364 (վաթսունինը հազար երեք հարյուր վաթսունչորս) ՀՀ դրամ՝ որպես տույժ :

Անշարժ գույքի հարկը 2021-2023 թվականների համար կազմում է 38.153 (երեսունութ հազար հարյուր հիսուներեք) ՀՀ դրամ:

2024 թվականի փետրվարի 28-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի առաջին մասի «բ» կետի հիմքով Տաշիրի համայնքապետարանում հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2024 թվականի մարտի 15-ին հրավիրվել են վարչական վարույթի լսումներ, որին մասնակցելու նպատակով պատշաճ ծանուցվել և չեն ներկայացել Արաիկ Դումիկյանը,Զվարթ Դումիկյանը, Աշոտ Դումիկյանը և Սերգեյ Դումիկյանը (հիմք՝ փոստային անդորրագիր 11.03.2024) :

(Վարչական վարույթի լսումներն իրականացվել են պատշաճ ծանուցված Արաիկ Դումիկյանի, Զվարթ Դումիկյանի, Աշոտ Դումիկյանի և Սերգեյ Դումիկյանի բացակայությամբ):

**3. Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը**.

ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է օրենքով սահմանված կարգով և չափով մուծել հարկեր, կատարել պարտադիր այլ վճարումներ: Համաձայն իրավահարաբերության ծագման պահին գործող «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի՝ հողի հարկ վճարողներ են հանդիսանում հողի սեփականատերերը,պետական սեփականություն հանդիսացող հողի մշտական օգտագործողները: Համաձայն իրավահարաբերության ծագման պահին գործող «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի՝ հողի հարկի գումարը համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասերի համար վճարվում է հարկվող օբյեկտի գտնվելու վայրի համայնքի բյուջե: Համաձայն ՀՀ հարկային օրեսգրքի 225-րդ հոդվածի ՝ անշարժ գույքի հարկ վճարողներ են համարվում կազմակերպություններն ու ֆիզիկական անձինք: Համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի 227-րդ հոդվածի՝ անշարժ գույքի հարկով հարկման օբյեկտ է համարվում անշարժ գույքը՝ հողամասերը և (կամ) դրանց բարելավումները: Համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի 401-րդ հոդվածի՝ հարկային վճարումը սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար հարկ վճարողը կամ հարկային գործակալը վճարում է տույժ՝ 0.04 տոկոսի չափով: Հարկային պարտավորությունների գծով գումարների վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում տեղական ինքնակառավարման մարմինը որոշում է կայացնում հարկ վճարողից ժամանակին չվճարված գումարը գանձելու վերաբերյալ և այդ մասին պատշաճ ծանուցում վերջինիս: Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով իրավահարաբերության պահին գործող «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքի 1-ին,16-րդ, ՀՀ հարկային օրենսգրքի 398-րդ, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով ՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԵՄ՝

1.Արաիկ Դումիկյանից, Հվարթ Դումիկյանից, Աշոտ Դումիկյանից և Սերգեյ Դումիկյանից հօգուտ Տաշիր համայնքի բյուջեի գանձել 248.918 (երկու հարյուր քառասունութ հազար ինը հարյուր տասնութ) ՀՀ դրամ՝ որպես հողի հարկի և անշարժ գույքի հարկի պարտքի գումար.

210.765 ( երկու հարյու տասը հազար յոթ հարյուր վաթսունհինգ) ՀՀ դրամ՝ որպես 06-074-0223-0082,06-074-0282-0097,06-074-0214-0008 և 06-074-0254-0111 կադաստրային ծածկագրերով, 2.2 հա ընդհանուր մակերեսով հողամասերի հողի հարկ, որից 141.401 ( հարյուր քառասունմեկ հազար չորս հարյուր մեկ) ՀՀ դրամ՝ որպես ապառք, 69.364 (վաթսունինը հազար երեք հարյուր վաթսունչորս) ՀՀ դրամ՝ որպես տույժ ,

38.153 (երեսունութ հազար հարյուր հիսուներեք) ՀՀ դրամ՝ որպես անշարժ գույքի հարկ: Հաշվեգրել և բռնագանձել մայր գումար և տոկոսներ՝ սկսած 28.02.2024 օրվան հաջորդող օրվանից մինչև պարտավորության փաստացի կատարման օրը ներառյալ:

2. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Տաշիրի համայնքի ղեկավարին՝ այն ստանալուց և դրա ուժի մեջ մտնելու օրվանից 2 ամսվա ընթացքում կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝երկամսյա ժամկետում:

3. Սույն որոշման պահանջները կամովին չկատարելու դեպքում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է կատարման ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության միջոցով անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում.

4. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Տաշիր համայնքի ղեկավարը:

5. Որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրվանից:

6.Հողի հարկը պետք է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչության Տաշիրի համայնքապետարանի 900275082031 հաշվեհամարին, անշարժ գույքի՝հարկը՝ 900275002005 հաշվեհամարին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Ն. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

2024թ. մարտի 15

ք.Տաշիր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
## ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am


# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 մարտի 2024 թվականի N 262-Ա

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածով, ի կատարումն Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարություն համակարգող նախարարի 2006 թվականի օգոստոսի 29-ի N 13-Ն հրամանի՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ ՝**

1. 2024 թվականի ապրիլի 19-ին անցկացնել մրցույթ համայքային ծառայության հետևյալ թափուր պաշտոնների համար՝

1)Տաշիրի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ (ծածկագիր՝ 2.3-9), ժամը՝11:30,

2)Տաշիրի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ (ծածկագիր՝ 2.3-10), ժամը՝11:30,

3)Տաշիրի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ (ծածկագիր՝ 2.3-14), ժամը՝14:30,

4)Տաշիրի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ (ծածկագիր՝ 2.3-15), ժամը՝14:30:

2. Մրցույթն անցկացնելու նպատակով օրենքով սահմանված կարգով հրապարակել հայտարարություն և ծանուցել մրցութային հանձնաժողովի անդամներին:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ**

**ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝** **Ն. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ**

2024թ. մարտի 15

ք.Տաշիր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 մարտի 2024 թվականի N 263-Ա

### ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳԵՐԱՎՃԱՐԻ ՀԱՇՎԱՆՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2020 թվականի օգոստոսի 3-ի «Չափից ավելի վճարված անշարժ գույքի հարկի և փոխադրամիջոցների գույքահարկի գումարների հաշվանցման և (կամ) վերադարձի կարգը սահմանելու մասին» N 920-Ն որոշումով և հիմք ընդունելով Նելլի Հայկի Այվազյանի դիմումը (մուտք՝ 15.03.2024-ի ՔԴ 305-24 )

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Նելլի Հայկի Այվազյանին սեփականության իրավունքով պատկանող, Տաշիր համայնքում հաշվառված Հոնդա Էլիսիոն 2.4 (Honda Elysion 2.4) մակնիշի, 51AV151 պետհամարանիշի ավտոմեքենայի գույքահարկի գերավճարը 21752 (քսանմեկ հազար յոթ հարյուր հիսուներկու) դրամը հաշվանցել և մարել նույն փոխադրամիջոցի ընթացիկ տարվա հարկային պարտավորությունը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Ն. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

2024թ. մարտի 15

ք.Տաշիր

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ**
**ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 մարտի 2024 թվականի N 264-Ա

## ԱԻԴԱ ԳԵՎՈՐԳՅԱՆԻՑ ՀՈՂԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐԻ ԳԱՆՁՄԱՆ ՄԱՍԻՆ

**1. ՀՀ Լոռու մարզի տաշիր համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան.**

21.07.2020-ին Աիդա Գևորգյանը մի կողմից և ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքը մյուս կողմից կնքել են ՀՀ,Լոռու մարզի Տաշիր համայնքի Կաթնառատ բնակավայրի վարչական տարածքում գտնվող, 06-053-0126-0075 ծածկագրով, 4 հա մակերեսով հողամասի երեք տարի ժամկետով ,տարեկան 28.000 (քսանութ հազար ) ՀՀ դրամ վարձավճարով վարձակալության պայմանագիր:

Աիդա Գևորգյանը, հանդիսանալով հարկվող օբյեկտի վարձակալ, չի կատարել հողի վարձակալության պայմանագրով նախատեսված իր պարտականությունները,այն է՝ սահմանված ժամկետում չի վճարել հողի վարձակալության վճարները: Արդյունքում 2023 հուլիսի 21-ին՝ պայամանագրի ժամկետի ավարտից հետո, հողի վարձակալության պարտքը կազմում է 48.093 (քառասունութ հազար իննսուներեք ) ՀՀ դրամ, որից 42.937 (քառասուներկու հազար ինը հարյուր երեսունյոթ) ՀՀ դրամ՝ որպես ապառք, 5.156 (հինգ հազար հարյուր հիսունվեց) ՀՀ դրամ՝որպես տույժ: «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին»,ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի առաջին մասի «բ» կետի հիմքով Տաշիրի համայնքապետարանում 2024 թվականի փետրվարի 27-ին հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2024 թվականի մարտի 15-ին հրավիրվել են վարչական վարույթի լսումներ, որին մասնակցելու նպատակով պատշաճ ծանուցվել և չի ներկայացել Աիդա Գևորգյանը (հիմք՝ փոստային անդորրագիր 06.03..2024) :

(Վարչական վարույթի լսումներն իրականացվել են պատշաճ ծանուցված Աիդա Գևորգյանի բացակայությամբ):

**2. Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.** ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է մուծել օրենքին համապատասխան սահմանված հարկեր, տուրքեր, կատարել պետական կամ

համայնքային բյուջե մուտքագրվող պարտադիր այլ վճարումներ: ՀՀ հողային օրենսգրքի 76-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ համայնքների վարչական սահմաններում գտնվող պետության և համայնքների սեփականությանը պատկանող հողամասերը վարձակալության իրավունքով են տրամադրում համայնքների ղեկավարները: Նույն օրենսգրքի 110-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետի համաձայն՝ հողամասի օգտագործողները պարտավոր են ժամանակին կատարել հողամասերի համար վճարումները: Համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 606-րդ հոդվածի՝ վարձակալության պայմանագրով վարձատուն պարտավորվում է վճարի դիմաց վարձակալի ժամանակավոր տիրապետմանը և (կամ)օգտագործմանը հանձնել գույք,նույն օրենսգրքի 616-րդ հոդվածի համաձայն՝ վարձակալը պարտավոր է ժամանակին մուծել գույքն օգտագործելու համար վճար(վարձավճարը): Վարձավճար մուծելու կարգը, պայմանները և ժամկետը որոշվում են վարձակալության պայմանագրով: Հարկային պարտավորությունների գծով գումարների վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում տեղական ինքնակառավարման մարմինը որոշում է կայացնում հարկ վճարողից ժամանակին չվճարված գումարը գանձելու վերաբերյալ և այդ մասին պատշաճ ծանուցում վերջինիս:Պայմանագրի 9-րդ կետի համաձայն՝ վճարումները կատարվում են եռամսյակային,10-րդ կետի համաձայն՝ընթացիկ վճարումները օգտվողի կողմից վճարվում են մինչև յուրաքանչյուր եռամսյակի վերջին ամսվա 25-ը: Պայմանագրի 11-րդ կետի համաձայն՝ պայմանագրով սահմանված ժամկետներում վճարումներ չվճարելու դեպքում կետանցի յուրաքանչյուր օրվա համար օգտվողը վճարում է տուժանք՝տարեկան վարձավճարի գումարի 0.5 տոկոսի չափով: Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 35-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետով, ՀՀ հողային օրենսգրքի 76-րդ,110-րդ,ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 606-րդ,616-րդ և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԵՄ՝

1. Աիդա Գևորգյանից հօգուտ Տաշիր համայնքի բյուջե գանձել 48.093 (քառասունութ հազար իննսուներեք ) ՀՀ դրամ, որից 42.937 (քառասուներկու հազար ինը հարյուր երեսունյոթ) ՀՀ դրամ՝ որպես ապառք, 5.156 (հինգ հազար հարյուր հիսունվեց) ՀՀ դրամ՝ որպես տույժ:

2. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Տաշիրի համայնքի ղեկավարին՝ այն ստանալուց և դրա ուժի մեջ մտնելու օրվանից 2 ամսվա ընթացքում կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝երկամսյա ժամկետում:

3. Սույն որոշման պահանջները կամովին չկատարելու դեպքում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է կատարման ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության միջոցով անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում.

4. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Տաշիր համայնքի ղեկավարը:

5. Գույքահարկը պետք է վճարվի ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչության Տաշիրի համայնքապետարանի 900275095074 հաշվարկային հաշվին:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման մասին օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ Ն. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

2024թ. մարտի 15

ք.Տաշիր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 մարտի 2024 թվականի N 265-Ա

## ՄԱՐՏԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՑ ՀՈՂԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐԻ ԳԱՆՁՄԱՆ ՄԱՍԻՆ

**1. ՀՀ Լոռու մարզի տաշիր համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան.**

07.07.2020-ին Մարտիկ Հովհաննիսյանը մի կողմից և ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքը մյուս կողմից կնքել են ՀՀ,Լոռու մարզի Տաշիր համայնքի Կաթնառատ բնակավայրի վարչական տարածքում գտնվող, 06-053-0126-0066 ծածկագրով, 3.6 հա մակերեսով հողամասի երեք տարի ժամկետով ,տարեկան 24.630 (քսանչորս հազար վեց հարյուր երեսուն ) ՀՀ դրամ վարձավճարով վարձակալության պայմանագիր:

Մարտիկ Հովհաննիսյանը, հանդիսանալով հարկվող օբյեկտի վարձակալ, չի կատարել հողի վարձակալության պայմանագրով նախատեսված իր պարտականությունները,այն է՝ սահմանված ժամկետում չի վճարել հողի վարձակալության վճարները: Արդյունքում 2023 հուլիսի 07-ին՝ պայմանագրի ժամկետի ավարտից հետո, հողի վարձակալության պարտքը կազմում է 57.684 (հիսունյոթ հազար վեց հարյուր ութսունչորս )՛ ՀՀ դրամ, որից 49.408 (քառասունինը հազար չորս հարյուր ութ) ՀՀ դրամ՝ որպես ապառք, 8.276 (ութ հազար երկու հարյուր յոթանասունվեց) ՀՀ դրամ՝որպես տույժ: «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի առաջին մասի «բ» կետի հիմքով Տաշիրի համայնքապետարանում 2024 թվականի փետրվարի 27-ին հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2024 թվականի մարտի 15-ին հրավիրվել են վարչական վարույթի լսումներ, որին մասնակցելու նպատակով պատշաճ ծանուցվել և չի ներկայացել Աիդա Գևորգյանը (հիմք՝ փոստային անդորրագիր 06.03.2024) :

(Վարչական վարույթի լսումներն իրականացվել են պատշաճ ծանուցված Մարտիկ Հովհաննիսյանի բացակայությամբ):

**2. Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.** ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է մուծել օրենքին համապատասխան սահմանված հարկեր, տուրքեր, կատարել պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվող պարտադիր այլ վճարումներ: ՀՀ հողային օրենսգրքի 76-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ համայնքների վարչական սահմաններում գտնվող պետության և համայնքների սեփականությանը պատկանող հողամասերը վարձակալության իրավունքով են տրամադրում համայնքների ղեկավարները: Նույն օրենսգրքի 110-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետի համաձայն՝ հողամասի օգտագործողները պարտավոր են ժամանակին կատարել հողամասերի համար վճարումները: Համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 606-րդ հոդվածի՝ վարձակալության պայմանագրով վարձատուն պարտավորվում է վճարի դիմաց վարձակալի ժամանակավոր տիրապետմանը և (կամ)օգտագործմանը հանձնել գույք,նույն օրենսգրքի 616-րդ հոդվածի համաձայն՝ վարձակալը պարտավոր է ժամանակին մուծել գույքն օգտագործելու համար վճար(վարձավճարը): Վարձավճար մուծելու կարգը, պայմանները և ժամկետը որոշվում են վարձակալության պայմանագրով: Հարկային պարտավորությունների գծով գումարների վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում տեղական ինքնակառավարման մարմինը որոշում է կայացնում հարկ վճարողից ժամանակին չվճարված գումարը գանձելու վերաբերյալ և այդ մասին պատշաճ ծանուցում վերջինիս:Պայմանագրի 9-րդ կետի համաձայն՝ վճարումները կատարվում են եռամսյակային,10-րդ կետի համաձայն՝ընթացիկ վճարումները օգտվողի կողմից վճարվում են մինչև յուրաքանչյուր եռամսյակի վերջին ամսվա 25-ը: Պայմանագրի 11-րդ կետի համաձայն՝ պայմանագրով սահմանված ժամկետներում վճարումներ չվճարելու դեպքում կետանցի յուրաքանչյուր օրվա համար օգտվողը վճարում է տուժանք՝տարեկան վարձավճարի գումարի 0.5 տոկոսի չափով: Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեղական ինքնակառվարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 35-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետով, ՀՀ հողային օրենսգրքի 76-րդ,110-րդ,ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 606-րդ,616-րդ և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Մարտիկ Հովհաննիսյանից հօգուտ Տաշիր համայնքի բյուջե գանձել 57.684 (հիսունյոթ հազար վեց հարյուր ութսունչորս ) ՀՀ դրամ, որից 49.408 (քառասունինը հազար չորս հարյուր ութ) ՀՀ դրամ՝ որպես ապառք, 8.276 (ութ հազար երկու հարյուր յոթանասունվեց) ՀՀ դրամ՝ որպես տույժ:

2. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Տաշիրի համայնքի ղեկավարին՝ այն ստանալուց և դրա ուժի մեջ մտնելու օրվանից 2 ամսվա ընթացքում կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝երկամսյա ժամկետում:

3. Սույն որոշման պահանջները կամովին չկատարելու դեպքում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված

կարգով այն ենթակա է կատարման ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության միջոցով անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում.

4. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Տաշիր համայնքի ղեկավարը:

5. Գույքահարկը պետք է վճարվի ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչության Տաշիրի համայնքապետարանի 900275095074 հաշվարկային հաշվին:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման մասին օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ**

**ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝** **Ն. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ**

2024թ. մարտի 15

ք.Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 մարտի 2024 թվականի N 266-Ա

## ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ <<ԱՆԱՀԻՏ ԽԱՉԱՏՐՅԱՆ ՆԱՐԻՄԱՆԻ>> ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր «Անահիտ Նարիմանի Խաչատրյան»-ի 2024 թվականի մարտի 13-ի N53 հայտը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Տաշիր համայնքի Սարչապետ բնակավայրի 1-ին փողոց թիվ 55-րդ հասցեում գործող անհատ ձեռնարկատեր «Անահիտ Նարիմանի Խաչատրյան»-ի հայտը բավարարել և նրան տալ ոգելից և ալկոհոլային խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն՝ 2024 թվականի առաջին եռամսյակի համար:

2. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ եռօրյա ժամկետում սահմանված կարգով հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվությունը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ Ն. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

2024թ. մարտի 15

ք.Տաշիր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 մարտի 2024 թվականի N 267-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆԸ ՊԱՏԿԱՆՈՂ ՋՐԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՐԳԱՄ ՀՐԱՅՐԻ ԽԱՆԱՂՅԱՆԻՆ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 48-րդ հոդվածի 4-րդ մասով, 76-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով, 38-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի «Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին» N 286 որոշումով հաստատված կարգի 8-րդ գլխի պահանջներով և հիմք ընդունելով Տաշիր համայնքի մրցության հանձնաժողովի 2024 թվականի մարտի 15-ի N18 արձանագրությունը՝ **ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝**

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզ, Տաշիր համայնք, գ. Սարատովկա, 39.02156 հա, 06-099-0218-0012 կադաստրային ծածկագրով ջրային նշանակության հողամասը, տարեկան 273200 (երկու հարյուր յոթանասուներեք հազար երկու հարյուր) դրամով, 10 տարի ժամկետով վարձակալության իրավունքով տրամադրել 2024 թվականի մարտի 15-ին Տաշիրի համայնքապետարանի մրցույթային հանձնաժողովի կողմից անցկացված արդյունքում հաղթող ճանաչված Արգամ Հրայրի Խանաղյանին :
2. Արգամ Հրայրի Խանաղյանի հետ կնքել հողի վարձակալության պայմանագիր:
3. Սույն որոշումից ծագող իրավական հարաբերությունները վավերացվում է նոտարական կարգով և ենթակա է պետական գրանցման :
4. Վարձակալությամբ տրվող հողամասի փաստաթղթերի ձևակերպման հետ կապված բոլոր ծախսերը կատարել վարձակալողի հաշվին:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ**

**ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝** **Ն. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ**

2024թ. մարտի 15

ք.Տաշիր